ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Վերադրված 1922

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ
2026 թ.
№ 17 (1172)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ 104 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայկական պետական մանկավարժական համալսարանը հիմնադրվել է 1922 թվականի նոյեմբերի 7-ին: Հեռավոր 1972 թվականին, 50-ամյակի առթիվ, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը ՍՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով՝ «Ուսուցչական կադրերի պատրաստման և մանկավարժական գիտության զարգացման գործում ձեռք բերած մեծ հաջողությունների համար»:

Հայ կրթամշակութային ժառանգության մեջ առանձնահատուկ դեր ունի ուսուցիչներ պատրաստող Մանկավարժականը, որն արդեն 104 տարի իրականացնում է այդ առաքելությունը: Մեծագույն հարգանքի են արժանի բոլոր նվիրյալները, որոնք անխոնջ ու տքնաջան աշխատանքի շնորհիվ պատմություն են կերտել՝ լուսավոր հետագիծ թողնելով սերունդների հիշողության մեջ: Յուրաքանչյուր սերունդ նորովի է կերտում բուհի տարեգրությունը:

Մանկավարժական համալսարանը սերնդակրթության հրաշալի ավանդույթների պատմություն ունի, ուսանողների հարափոփոխ երթին ուղեկցած և ուղեկցող պրոֆեսորադասախոսական կազմ, որի ամենօրյա գործունեությամբ է նախանշվում վաղվա մեր օրը:

21-րդ դարի նորագույն տեխնոլոգիաների ժամանակաշրջանում



նորովի է ուրվագծվում համալսարանի դերը, որն առանձնանում է ռազմավարական իր նշանակությամբ ու դերով՝ պայմանավորված ուսուցչի որակական նոր կերպարի դրսևորմամբ:

Շնորհավոր 104-ամյակդ, սիրելի՛ Մանկավարժական:

Ցուցադրություն՝ նվիրված համալսարանի 104-ամյա պատմությանը

Մանկավարժական համալսարանի պատմության թանգարանում նոյեմբերի 3-ին բացվել է բուհի 104-ամյակին նվիրված ցուցահանդես, որտեղ ամփոփված են բարձրագույն կրթօջախի պատմության կարևոր իրադարձությունները՝ բուհի ստեղծման ու կայացման պատմությունից մինչև մեր օրերը:

Ցուցադրության մեջ նշանակալի տեղ ունեն պատմության հերոսական էջերը՝ նվիրված տարբեր պատերազմական գործողությունների մասնակցած մեր ուսանողներին ու դասախոսներին՝ ընդհուպ մինչև Արցախի գոյամարտ: Համալսարանի պատմության ֆոնդերից ներկայացված են պատմական փաստաթղթեր, լուսանկարներ, տարբեր արժեքավոր իրեր:

Ցուցադրությանն առանձնահատուկ շուք են տալիս նաև Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի պրոֆեսորի պաշտոնակատար Աշոտ Բաբախանյանի անձնական հավաքածուից ներկայացված նամականիշերը, որոնք վերաբերում են համալսարանի գիտակրթական կյանքին, ներկայացված են Խաչատուր Աբովյանի հետ կապված հետաքրքիր պատմական դրվագներ:

Ցուցադրությունը ներկայացնում է մանկավարժական մտքի զարգացման ու տարբեր գործընթացների առաջընթացի պատմությունը. այն բուհն արժևորելու յուրահատուկ ձև է, կրթական ավանդույթները պահպանելու հորդոր:







Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

օրհներգը

Ճամփան ես մեր լուսավորում
Դու Մաշտոցի արդար լույսով
Ու լցնում ես սրտերը մեր
Հավատով ու պայծառ հույսով:

Կրկներգ.
Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճանփան ես մեր լուսավոր
Աբովյանից մինչ այսօր:

Ճանապարհը քո փառավոր
Շարունակվի թող հավիտյան,
Կանաչ լինի ու լուսավոր,
Մեր հարազատ համալսարան:

Կրկներգ.
Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճանփան ես մեր լուսավոր
Աբովյանից մինչ այսօր:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ



ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Արաքսիա Սվաջյանը հանդիպումներ է ունենում բուհի տարբեր ստորաբաժանումների աշխատողների, ֆակուլտետների և համալսարանական ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի հետ՝ առկա խնդիրներին ծանոթանալու, աշխատանքները բարելավելու ուղղությամբ առաջարկությունները լսելու միտումով:

Դեկաններն ու ամբիոնների վարիչները ներկայացնում են կրթական ծրագրերին, ուսումնական գործընթացներին, գիտահետազոտական գործունեությանը, միջազգային համագործակցությանը, համալսարան-դպրոց կապին, ֆորմալ ու ոչ ֆորմալ վերապատրաստումներին, ավարտական աշխատանքների որակական ցուցանիշներին, գիտահետազոտական ծրագրերում ուսանողների ներգրավվածությանը, դասախոսական կազմի ծանրաբեռնվածությանը ու ցածր աշխատավարձերին, դասավանդման մեթոդիկաների ուղղությամբ հետազոտական ծրագրերի սղությանը, և այլ հարցերի:



Ստորաբաժանումների ղեկավարները ներկայացնում են ֆակուլտետների ու ամբիոնների զարգացման առաջնահերթություններն ու կրթական ծրագրերը, միաժամանակ անդրադառնում առկա խնդիրներին:

Ռեկտորի պաշտոնակատար Արաքսիա Սվաջյանը հանգամանորեն անդրադառնում է բարձրացված խնդիրներին՝ գնահատելով դոկտոր, պրոֆեսորների վաստակը, միաժամանակ խոսելով սերնդափոխության՝ երիտասարդ կադրերի պատրաստման անհրաժեշտության մասին, պաշտպանվող ատենախոսությունների նվազմանն ու մարտահրավերներին, կրթական ծրագրերի բովանդակության վերանայմանը ըստ շուկայի պահանջարկի:

Բոլոր ստորաբաժանումների պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպումների ընթացքում նա ընդգծում է՝ պետք է վերանայել կրթական ծրագրերն ու դասավանդման մեթոդաբանությունը, բուհը մոտեցնել պրակտիկայի կազմակերպման գործընթացում, միաժամանակ անդրադառնում գնահատման համակարգում առկա լուրջ խնդիրներին, ավարտական թեզերի մեջ գրագողությանը:





Ֆակուլտետներում կան ընդհանոր և առանձնահատուկ խնդիրներ, որոնք ենթադրում են լուծման տարբեր ճանապարհներ:

Ռեկտորի պաշտոնակատարն ընդգծում է նաև, որ համալսարանի հիմնական առաքելությունը պետք է շարունակի մնալ կրթության և մանկավարժության ոլորտը, և այդ առաջնահերթությունը պետք է արտացոլվի բուհական բոլոր գործընթացներում:











ԱՄՓՈՓԻՉ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 9-ին ամփոփվեց «Հայաստանում և Մոլդովայում մանկավարժական կրթության բարեփոխումը հանուն կանաչ և թվային անցման (T4GREEN» ծրագիրը:



2024 թվականի փետրվարին Երևանում մեկնարկած T4GREEN ծրագիրը նպաստել է վերոհիշյալ երկրներում մանկավարժական կրթության ավանդական ծրագրերից և դասավանդման մեթոդներից անցում կատարել դեպի կանաչ և թվային կրթություն: Ամփոփիչ համաժողովին ներկայացվեցին ծրագրի արդյունքները՝ Մանկավարժական կրթության 2027–2035 թվականների ազգային հայեցակարգը և Հայաստանի ու Մոլդովայի հինգ համալսարաններում վերանայված ու փորձարկված կրթական ծրագրերը:

«Հայաստանում և Մոլդովայում մանկավարժական կրթության բարեփոխումը հանուն կանաչ և թվային անցման» (T4GREEN) ծրագիրը 2024 թվականից իրականացվում է Էրազմուս+ ծրագրի բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման գործողության շրջանակում՝ ՀՊՄՀ-ի համակարգմամբ և Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Ծրագրի գործընկերներն են Երևանի և Շիրակի պետական համալսարանները, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնը, Կրթական քաղաքականության և կառավարման հայկական կենտրոնը, Մոլդովայի Քիշնևի Իոն Կրյանգեի անվան պետական մանկավարժական համալսարանը, Բելցիի Ալեկու Ռուսոյի անվան պետական համալսարանը, «PRO DIDACTICA» կրթական կենտրոնը, Մոլդովայի կրթության ևհետազոտությունների նախարարությունը, ինչպես նաև Պորտուգալիայի, Չեխիայի և Իսպանիայի համալսարանները:

Ծրագրի նպատակը մանկավարժական կրթության բարեփոխումն է, որի նպատակն է աջակցել հանրակրթության ազգային նպատակներին և կանաչ ու թվային անցմանը: Ծրագիրը հետապնդում է չորս խնդրի լուծում՝ ամրապնդել քաղաքականություն մշակողների, դասախոսների և հետազոտողների կարողությունները, մշակել մանկավարժական կրթության ազգային հայեցակարգ 2027–2035 թվականների համար կանաչ և թվային անցման ուղղությամբ, սահմանել ուսուցչի նախնական կրթության չափանիշներ (benchmarks), և վերանայել բակալավրի, մագիստրոսի և կարճաժամկետ կրեդիտային ծրագրերը, այդ թվում՝ ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների համար:

Վալյադոլիդի, Մասարիկի և Բեյրա Ինտերիորի համալսարանների հետ, նրանց փորձի ու մասնագիտական աջակցությամբ Հայաստանի և Մոլդովայի հինգ բուհերում ԵՄ կանաչ և թվային առաջնահերթություններին համապատասխան, մի շարք առարկաների գծով վերանայվել և փորձարկվել են բակալավրի և մագիստրոսի մանկավարժական կրթական ծրագրեր:

Երկու երկրների կրթության նախարարությունները մշակել են նաև մանկավարժական կրթության զարգացման ազգային հայեցակարգեր 2027–2035 թվականների համար, որոնց հաստատման գործընթացը ընթացքի մեջ է: Իսկ 2025 թ.աշնանը ՀՊՄՀ-ում ուսուցիչների համայնքի հետ կայացել է հայեցակարգի նախագծի բաց քննարկում, որի առանցքում ուսուցչի թվային և կայունության կարողունակությունները պարտադիր և գնահատելի մասնագիտական վերջնարդյունք դարձնելն է:

Ամփոփիչ համաժողովում ելույթ ունեցավ ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Արաքսիա Սվաջյանը:

Նա ներկայացրց ներկայացրեց T4GREEN ծրագրի ընթացքն ու հիմնական առաջնահերթությունները՝ կարևորելով Հայաստանի և Մոլդովայի մանկավարժական կրթության 2027–2035 թվականների ազգային հայեցակարգերի նախագծերի մշակումը, ինչպես նաև բուհերի բակալավրի, մագիստրոսի և կարճաժամկետ կրեդիտային կրթական ծրագրերի վերանայումն ու փորձարկումը:

Նա անդրադարձավ ժամանակակից կրթական ծրագրերում ներառված կայուն զարգացման, թվային տեխնոլոգիաների կիրառմանն ու ներառական կրթության բաղադրիչների կարևորությանը ժամանակակից կրթական համակարգի ձևավորման և ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության գործում:

Այնուհետև ներկաներին ողջունեց ՀՀ ԿԳՄՍ հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը, որը խոսեց մշակված հայեցակարգի մասին՝ ընդգծելով, որ ԿԳՄՍ համագործակցությունների հիմքում կառավարության և ինստիտուցիոնալ կառուցվածքների միջև իրականացվող փոխկապակցված քաղաքականությունն է:



Ներկաներին ողջունեց նաև Էրազմուս+ հայաստանյան համակարգող Մարիաննա Սարգսյանը:

Զեկուցումներով հանդես եկան ՀՊՄՀ Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի աշխատակից Ռաիսա Ավետյանը և ԿԳՄՍ նախարարության հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը:

Թամարա Սարգսյանը խոսեց Ուսուցիչների կրթության ազգային հայեցակարգի /2027-2035թթ./ հիմքում ընկած օրենսդրական մի շարք փաստաթղթերի, այն է՝ ՀՀ հանրակրթության մասին օրենքի /2009թ./, որով սահմանվել են կրթության ոլորտում մանկավարժների հետ կապված կարևոր ստանդարտներ ու մոտեցումներ:

Առանցքային փոփոխություններ են կատարվել՝ կապված հանրապետությունում հանրակրթական ոլորտի բարեփոխումների հետ, որոնք առաջին հերթին



արտահայտված են հանրակրթության նոր պետական չափորոշիչներում: 2020 թվականի նոր չափորոշիչներով հանրակրթության առջև դրվել են նոր պահանջներ՝ գիտելիքահեն կրթությունից անցում կարողունակահեն կրթությանը, և մշակված հայեցակարգի հիմքում դնելով բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները, որով նախատեսվում է կրթության ոլորտում կանաչ քաղաքականության ներդրումը:

Բանախոսի հավաստմամբ՝ ուշադրությունը պետք է կենտրոնացվի ուսուցիչների մասնագիտական զարգացման որակների շարունակական արդյունավետ զարգացման վրա:

Թամարա Սարգսյանը հանգամանորեն ներկայացրեց մանկավարժական կրթության հայեցակարգի 7 ուղղությունները մինչև 2032-2035 թթ. վերջնարդյունքների գնահատում:

Բոլոր զեկուցումները միտված էին հայեցակարգի առանցքային դրույթների ներկայացմանն ու իրականացմանը վերջնարդյունքների ստացման համատեքստում:

Սիլվա Ասրյան



Հայ-հունգարական կապերի շրջանակում



Արդեն 10 տարի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը համագործակցում է Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի հետ, որտեղ համատեղ նախաձեռնությամբ ու ջանքերով բացվել է հայագիտական ամբիոն: ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի և ղեկավարության հետևողական աշխատանքի շնորհիվ այդ համագործակցությունը կայացավ և տարիների հետ ամրապնդվեց: Համագործակցության ակունքներում է կանգնած նաև Հունգարիայի կաթոլիկ համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչը, որը ՀՊՄՀ պատվավոր պրոֆեսոր է:

Համագործակցության 10-ամյակի կապակցությամբ Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ռեկտոր Գիզա Կումհնեցին շնորհավորական ուղերձ է հղել ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Արաքսյա Սվաջյանը, որը Հունգարիայի համալսարանի ղեկավարությանն է փոխանցել դեկան Էդգար Հովհաննիսյանը:

Ուղերձում ռեկտորն ընդգծել է, որ բուհերի միջև ծավալվել է արդյունավետ համագործակցություն և տարիների ընթացքում հաջողվել է կառուցել ամուր կրթական և գիտական կամուրջներ՝ նպաստելով ուսանողների ու դասախոսների փոխանակմանը, ինչպես նաև մի շարք կարևոր նախաձեռնությունների, այդ թվում՝ հայագիտության հանդեպ հետաքրքրության ձևավորման ու զարգացման ուղղությամբ համատեղ գիտակրթական ծրագրերի իրականացմանը:

«10 տարի առաջ՝ 2016 թվականին, անիրական թվացող այս գաղափարի ոգեշնչողները ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմն էր, և ահա այսօր մենք առերեսվում ենք հունգարական ակադեմիական միջավայրում հայագիտության զարգացման աննախադեպ, հավատ ներշնչող ընթացքին, ինչի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի ղեկավարությանն ու պրոֆեսորադասախոսական կազմին»,-նշված էր ուղերձում:

Այսօր Հունգարիայի վերոհիշյալ համալսարանը վստահաբար իրականացնում է «Հայագիտություն» առանձին մագիստրոսական կրթական ծրագիր. Մանկավարժական համալսարանի ուսանողները հնարավորություն ունեն իրենց ուսումնառությունը շարունակել կաթոլիկ համալսարանում մեկ կիսամյակ, իսկ հունգար ուսանողները փոխադարձաբար ուսանում են մեր համալսարանում: Հայագիտության գծով մասնագիտացված ուսանողների թիվը մի քանի տասնյակ է, որը տարիների ընթացքում ավելի ու ավելի է ընդլայնվում:

Համագործակցության վկայություններից մեկն էլ ՀՊՄՀ-ում բացված Հունգարական մշակույթի կենտրոնն է, որի գործունեության շրջանակում պարբերաբար իրականացվում են երկու երկրների համալսարանների ներկայացուցչական կազմի փոխադարձ այցեր, իրականացվում են կրթական ու մշակութային մի շարք հետաքրքիր միջոցառումներ:

«Համագործակցության այս հոբելյանը լավագույն առիթ է՝ երկուստեք արժևորելու համատեղ կատարած աշխատանքը և ուրվագծելու նոր տեսլական շարունակական ծրագրերի իրականացման համար գիտական նոր նախագծերի ու մշակութային երկխոսության ընդլայնման հարթակում»,-ասվում է ուղերձում:

Հավելենք, որ 1635 թվականին արքեպիսկոպոս Պիտեր Պազմանի կողմից հիմնադրված այս համալսարանը կարևոր նշանակություն է ունեցել Եվրոպայի կրթության և կրոնական մշակույթի պահպանման գործում, որի գործունեությունն այսօր էլ ազգի բարոյական ու մտավոր մշակույթի պահպանման լավագույն երաշխիքն է:

«Ուղիղ 10 տարի առաջ՝ այս օրերին, երկարատև ջանքերի և բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելուց հետո Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Հունգարիայի Պազմանի Պիտեր կաթոլիկ համալսարանների միջև համագործակցության արդյունքում Բուդապեշտում բացվեց հայագիտության ամբիոն,-ասում է դեկան Էդգար Հովհաննիսյանը: -Ամբիոնն այս տարիներին անցավ կայացման կարևոր ճանապարհ: Այսօր այնտեղ իրականացվում են ոչ միայն հետազոտական նախագծեր, այլ նաև բակալավրիական, մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրեր, որն աննախադեպ է ողջ աշխարհում: Այդ ամբիոնում են ուսանել տասնյակ ուսանողներ Հայաստանից, Արցախից, Սփյուռքից և Հունգարիայից: Նրանցից ոմանք մոտ ապագայում վստահ կհամալրեն հայագետների նոր սերնդի շարքերը: Ամբիոնը կարևոր կամուրջ է նաև հայ-հունգարական մշակութային և հումանիտար կապերի զարգացման գործում»:

Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում նոյեմբերի 6-7-ը հայագիտության ամբիոնի հիմնադրման հոբելյանական միջոցառումներին մասնակցում էին նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը և դոցենտ Հայկ Գրիգորյանը:

Էդգար Հովհաննիսյանին Հունգարիայի հայկական համայնքը ներկայացնող "Transylvanian Armenian Roots Cultural Association"-ի կողմից շնորհվել է հայկական արմատներով հայտնի հունգարական գեներալ Ցեց Յանոշի անունը կրող պարգև (The Czetz János Award): Դեռևս 2023 թվականին Կաթոլիկ համալսարանի խորհրդի որոշմամբ նա պարգևատրվել էր Պազմանի մեդալով (Pázmány-medalion):

Սիլվա Ասրյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ



- Պարոն Պողոսյան, վերջերս Իտալիայում մասնակցել եք միջազգային գիտաժողովի: Որտեղ էր այն անցկացվում և ինչպիսի միջոցառում էր:

- Մասնակցել եմ Իտալիայի Բոլոնիա քաղաքում անցկացված Արվեստի և հումանիտար գիտությունների 13-րդ միջազգային գիտաժողովին: Այն կազմակերպվում է Ավստրիական գիտական ընկերության կողմից, ամեն տարի, տարբեր երկրներում: Գիտաժողովին մասնակցում են բազմաթիվ երկրների գիտնականներ: Ես նման գիտաժողովների մասնակցում եմ 2015 թվականից:

- Ինչ հետազոտության շրջանակում էիք մասնակցում այս գիտաժողովին:

-ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնում իրականացվում է Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ շահած «Հայաստանի անկախության գաղափարի փոխակերպումները 1877–1923 թվականներին» գիտական ծրագիրը: Դրա շրջանակում ուսումնասիրում ենք անկախության գաղափարի ձևավորումն ու զարգացումը և մեր հետազոտությունները ներկայացնում միջազգային հանրությանը՝ գիտաժողովների ու գիտական հոդվածների միջոցով:

-Ինչ է նշանակում անկախության գաղափարի փոխակերպում:

-Խոսքը վերաբերում է նրան, թե ինչպես է հայ քաղաքական միտքը տարբեր ժամանակներում պատկերացրել Հայաստանի ապագան: Խոսքը վերաբերում է գաղափարական փոխակերպումներին հայ հասարակության ներսում. սկզբում բարձրացվել է ինքնավարության հարցը, այնուհետև՝ բարենորոգումների պահանջը, իսկ երբ պարզ է դարձել, որ Օսմանյան կայսրության կազմում դրանք իրականացնելը հնարավոր չէ, ինքնավարության գաղափարն աստիճանաբար վերածվել է անկախ պետականության ձգտման: Այդ զարգացումները կապված էին նաև միջազգային քաղաքական իրադրության հետ:

-Ինչ թեմաներ էիք ներկայացրել Բոլոնիայի գիտաժողովում:

- Ելույթ եմ ունեցել նաև գիտաժողովի պլենար նիստում: Ներկայացրել եմ երկու հոդված: Առաջինը վերաբերում էր 1912–1914 թվականների հայկական բարենորոգումներին՝ որպես ազգային ինքնավարության հասունացման գործոնի, երկրորդը՝ 1914–1915 թվականներին հայ քաղաքական մտքի կողմնորոշումներին և ինքնավարության գաղափարին՝ որպես անկախ պետականության նախահիմքի: Երկու թեմաներն էլ փոխկապակցված են և ցույց են տալիս, թե ինչպես էր ինքնավարության ծրագիրը դիտարկվում որպես դեպի լիակատար անկախություն տանող ճանապարհ:

- Որո՞նք էին այդ ծրագրի իրականացման հիմնական խոչընդոտները:

-Մեծ տերությունները քննարկում էին Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցը՝ Անտանտի երկրների հովանավորությամբ: Սակայն Հայոց ցեղասպանությունը արմատապես փոխեց իրավիճակը. այդ տարածքներում հայ բնակչության զանգվածային ոչնչացումից հետո ինքնավարության ծրագիրը կորցրեց իր հիմքը: Հետագայում մեծ տերություններն իրենց շահերից ելնելով՝ քննարկեցին հայկական տարածքների բաժանման տարբերակներ: Այս գործընթացները ցույց են տալիս, թե որքան մեծ ազդեցություն ունեին միջազգային քաղաքական շահերը Հայաստանի ճակատագրի վրա:

«Անհրաժեշտ է հստակ նպատակներ ունենալ և հետևողականորեն շարժվել դրանց իրականացման ուղղությամբ». *Սամվել Պողոսյան*

- Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ չիրականացան հայկական պետականության ավելի լայն հնարավորությունները:

- Իմ գնահատմամբ՝ վճռորոշ գործոնը Հայոց ցեղասպանությունն էր: Եթե այն տեղի չունենար, հայ ժողովուրդը և հայկական պետականությունը կարող էին ունենալ բոլորովին այլ պատմական զարգացում: Ցեղասպանության առաջին քայլերը Թուրքիայի կողմից առաջինը դատապարտեցին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը՝ դրանք որակելով մարդկության և քաղաքակրթության դեմ հանցագործություն:

Ինչն է խանգարել մեզ՝ ունենալու միացյալ Հայաստան. կարևոր է հաղթահարել այն պատկերացումը, թե հայ ժողովուրդը միշտ եղել է փոքր ու թույլ: Պետականության երկարատև բացակայությունը դեռ չի նշանակում, որ ժողովուրդը կորցրել է իր ներուժը կամ պատմական շարունակականությունը: Պատմության մեջ կան բազմաթիվ օրինակներ, երբ ժողովուրդները երկար ընդմիջումից հետո վերականգնել են իրենց պետականությունը:

-Պատմական փորձի տեսանկյունից ինչպե՞ս եք գնահատում Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման փորձերը:

-Պատմությունը ցույց է տալիս, որ Օսմանյան իշխանությունները տարբեր ժամանակներում ստանձնել են հայկական բարենորոգումներ իրականացնելու պարտավորություններ, սակայն դրանք չեն կատարել: 1878 թվականի Բեռլինի պայմանագրից մինչև 1895 թվականի մայիսյան բարենորոգումների ծրագիրն ու 1914 թվականի համաձայնությունը՝ խոստումները չեն վերածվել իրական քայլերի: Այդ պատճառով պատմական փորձը պետք է հաշվի առնել և գնահատել ոչ միայն պայմանագրերի առկայությունը, այլև դրանց իրականացման պատրաստակամությունը:

-Ինչ խնդիրներ եք տեսնում մեր այսօրվա դիվանագիտության մեջ:

-Մենք ավելի շատ փորձում ենք հարմարվել աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նպատակներ ունենալ և հետևողականորեն շարժվել դրանց իրականացման ուղղությամբ: Արագ արձագանքը երբեմն օգտակար է կարճաժամկետ իրավիճակներում, բայց երկարատև գործընթացները պահանջում են համբերություն, հաշվարկ և ռազմավարական մտածողություն:

- Ինչ տվեց գիտաժողովին մասնակցությունը և ինչպե՞ս ընդունվեցին ձեր զեկույցները:

-Գիտաժողովը հնարավորություն տվեց ներկայացնելու Հայաստանի պատմությանն ու Հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերը միջազգային մասնագիտական շրջանակներին: Նման միջոցառումները կարևոր են ոչ միայն հոդվածների հրապարակման, այլև հայ գիտնականների ներկայության համար: Երբ տարբեր երկրներից մասնագետներ են քննարկում մեր պատմությունը, մենք հնարավորություն ենք ստանում ներկայացնելու մեր տեսակետը և պատասխանելու հարցերին: Ինձ համար հատկապես կարևոր է, որ քննարկումներին ակտիվորեն մասնակցում էին տարբեր երկրների գիտնականներ, և թեման մեծ հետաքրքրություն առաջացրեց:

Հարցազրույցը պ.գ.դ., պրոֆեսոր Սամվել Պողոսյանի հետ վարեց Սիլվա Ասրյանը

ԲՈՒՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻՑ



Ալիտա Դոլուխանյան
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՊՄՀ շրջանավարտ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱԶԳԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԴՊՐՈՑԻՑ, ՈՒՍՏԻ ԱՅՍՏԵՂ ԱՇԽԱՏԵԼԸ ՊԵՏՔ Է ՀՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՌԻԹ ԼԻՆԻ».

Ալիտա Դոլուխանյան

- Տիկին Դոլուխանյան, ինչպե՞ս ընտրեցիք մանկավարժի մասնագիտությունը:

- Մանկուց շատ եմ սիրել գիրքը: Մեր ընտանիքում գրքի նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք ու պաշտամունք կար, և դեռ երկրորդ դասարանում գրելու ցանկություն ունեի: Դպրոցում ինձ հատկապես ոգեշնչել է գրականության ուսուցիչ Տելեմակ Մովսիսյանը: Նա շատ պատրաստված մարդ էր և կարող էր մրցակցել մեր բոլոր դասախոսների հետ: Նա կարողանում էր այնպես ներկայացնել գրականությունը, որ ես մտածում էի՝ կարելի է երեխաներին այդպես սովորեցնել դպրոցում: Շահումյանի անվան դպրոցն ավարտել եմ գերազանցությամբ: Թեև ուսուցիչներս կարծում էին, որ պետք է բժշկական ընդունվեմ, ես գիտակցաբար ընտրեցի Մանկավարժականը:

-Որպես բուհի ակունքների մոտ կանգնած անհատ և ՀՊՄՀ շրջանավարտ՝ ինչ հիշողություններ եք պահում Ձեզ դասավանդած անվանի դասախոսների մասին:

-17 տարեկանից այս բուհում եմ: Մանկավարժականում հանդիպեցի մեծ գիտելիքներով և իսկական կոչումով դասախոսների: Առաջին տպավորությունները ստացել եմ Մորուս Հասրաթյանից: Ես ընդունվել էի պատմալեզվագրական ֆակուլտետ, և նա չկարողացավ ինձ համոզել՝ սովորել պատմության բաժնում: Երկրոդ տպավորությունը ստացել եմ Աշոտ Աբրահամյանից. երբ նա մտավ լսարան՝ ես հասկացա, որ ճիշտ ընտրություն եմ կատարել, որովհետև նա խոսում էր սահուն, գեղեցիկ, անթերի և ուներ ծով գիտելիքներ: Առաքել Առաքելյանն արդեն 84 տարեկան էր, նա մեզ դասավանդում էր հունահռոմեական գրականություն: Հունարեն լավ գիտեր, բուհական դասագրքերի հեղինակ էր: Բայց այդ տարիքում անգամ՝ գեղեցիկ հագնված ու խնամված, բարեկիրթ դասախոս էր: Նա դասախոսի դասական օրինակ էր:

Բարձր կուրսերում ևս ես շատ լավ դասախոսներ եմ ունեցել՝ Արշալույս Բաբայան, Վաչե Պարտիզունի, Վաղարշակ Քոսյան և Արարատ Ղարիբյան, որոնք շատ մեծ լեզվաբաններ էին:

Մեր դեկան Արտաշես Պողոսյանը հրավիրեց արտասահմանյան գրականության մասնագետ Սողոմոն Սողոմոնյանին Երևանի պետական համալսարանից. հաճույք էր նրան լսելը:

Նրանք կոչումով դասախոսներ էին: Նրանցից սովորում էինք ոչ միայն առարկան, այլև գիտնականին ու մարդուն բնորոշ կեցվածքը: Ինձ համար կարևոր էր, որ դասախոսը շարունակ սովորեր և իր գիտելիքը փոխանցեր ուսանողներին:

Ուսանողական տարիներին բարձր առաջադիմություն եմ ունեցել, եղել եմ Լենինյան թոշակառու, իսկ հետագայում անմիջապես ընդունվել եմ ասպիրանտուրա: Ասեմ, որ անվանական 2 թոշակ կար ընդամենը, մյուսը քիմիայի գծով էր: Մենք պայքարում էինք, որ այդ անվանական կրթաթոշակը մնա մեր ֆակուլտետում:

Այնուհետև աշխատել եմ ասպիրանտուրայի բաժնի վարիչ, որից հետո ինձ վստահել են դասավանդելու լուրջ դասընթաց:

Ասեմ նաև, որ մի թյուր կարծիք կար, թե Երևանի պետական համալսարանը ամենալավն է, բայց այնպիսի լեզվաբան, ինչպիսին է Աշոտ Աբրահամյանը, այդ ժամանակ, համենայն դեպս ԵՊՀ-ն չուներ:

Հին աշխարհից հայտնի մարդիկ եղել են մանկավարժներ՝ Պլատոն՝ մինչև օրս չգերազանցված փիլիսոփա, Արիստոտել՝ Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը, Գրիգոր Տաթևացի՝ մեծ մանկավարժ, համալսարանի ռեկտոր, Խաչատուր Աբովյան՝ հանճար: Նշանավոր հայագետ Ժան Պիեռ Մահեն ասել է՝ հայ գրականությունը համաշխարհային գրականությանը տվել է երկու հանճար՝ Գրիգոր Նարեկացի և Խաչատուր Աբովյան: Բայց շատերը Խաչատուր Աբովյանին մինչև հիմա չեն հասկանում:

Եվ կարծում եմ շատ կարևոր է լեզուների իմացությունը: Իմ օրինակը եղել են Աճառյանը, Աբեղյանը, Նիկողայոս Մառը, Ադոնցը, որոնք բազմաթիվ լեզուներ գիտեին և բազմակողմանի զարգացած էին:

Ես դեռ փոքր ժամանակվանից երազել եմ շատ երկրներ տեսնել ու տեսել եմ:

Գիտեք ինչ հաճելի էր, երբ ես 1989 թվականին երկու շաբաթ պարապեցի Բոստոնի մի աշխարհահռչակ քոլեջի գրադարանում: Մի քանի տարի գործուղվել եմ Նորթիստրն համալսարան, որի դասախոսը 4 տարի աշխատում է, իսկ 5-րդ տարում գնում է գիրք գրելու, և աշխատավարձը պահպանվում է: Եվ նրանք միշտ արդյունք են տալիս:

Մեզանում պահանջներն այսօր մի տեսակ շատ են իջեցվել, շատ քիչ են կարդում: Ես շատ ուրախ եմ, որ հիմա մեր ԿԳՄՍ նախարարությունը ընթերցանության վրա ուշադրություն է դարձնում:

-Տիկին Դոլուխանյան, կպատմե՞ք Ձեր արմատների մասին: Ինչ նշանակություն են ունեցել ընտանիքն ու միջավայրը Ձեր ձևավորման գործում:

-Ես երկու կողմից էլ ազնվական ծագում ունեմ: Մայրս Ադոնցներից է, իսկ հայրս Արցախի այդ Գանձասար վանքը հիմնող Դոլուի շառավիղներից է:Իմ պապիկը շատ հայտնի մարդ է եղել՝ Դանիել Դոլուխանյանը: Երկու անգամ Անդրֆեդերացիայի անդամ է եղել, հիմնել է Նորավան գյուղը: Մայրս Բռնակոթ գյուղից էր:

Ծնողներս եղել են ուսուցիչներ, հետո հայրս բարձր պաշտոններ է ունեցել: Տանը գրքի չտեսնված պաշտամունք է եղել: Երեկոները մեզ համար կարդում էին Թումանյանի ստեղծագործությունները, իսկ հայրս խրախուսում էր հետաքրքրասիրությունը՝ մեզ տանում էր բնության գիրկը, ցույց տալիս հետաքրքիր վայրեր և միշտ պատրաստ էր անհրաժեշտ գիրքը գտնել:

Մեծացել եմ կրթությունն ու մշակույթը գնահատող, հյուրընկալ ընտանիքում: Այդ միջավայրն է մեծապես ձևավորել իմ վերաբերմունքը գիտելիքի և կյանքի նկատմամբ:

Նրանք պահում էին հայկական ամենալավ գծերը, բայց շատ առաջ էին: Մեր տանը հետևում էին ժամանակակից նորաձևությանը:

Ամուսինս Մատենադարանի նշանավոր գիտնականներից էր, բայց մենք պարզապես տարբեր էինք մտածողությամբ, որն էլ եղավ ամուսնալուծության պատճառը:

Ունեմ հրաշալի աղջիկ, որը իրավաբանության դոկտոր, պրոֆեսոր է ԱՄՆ-ում, անսահման սիրում եմ աղջկաս ամուսնուն և թոռնիկիս ամուսնուն, որը հայ չի, ամերիկացի է, բայց հաղորդակցվում է հայերեն, շատ սիրում է Երևանը և հայերին:

- Ինչն եք կարևորում մանկավարժական բուհի ավանդույթների և առաջընթացի մեջ:

- Մեր բուհը եղել է առողջ բուհ և այդպիսին էլ կմնա: Ամենակարևորը համարում եմ անշահախնդիր նվիրումը, աշխատասիրությունն ու պատասխանատվությունը՝ անկախ տարիքից կամ աշխատավարձից: Պետք է գնահատել այն մարդուն, որն աշխատում է, արդյունք է տալիս և իր գործին նվիրված է: Մանկավարժական բուհը ռազմավարական նշանակություն ունի, որովհետև ազգի կրթությունը սկսվում է դպրոցից: Ուստի այստեղ աշխատելը պետք է հպարտության առիթ լինի:

- Ինչպիսին պետք է լինի այսօրվա ուսուցիչը և ինչպե՞ս եք գնահատում սերունդների կապը:

- Այսօրվա ուսանողների մեջ շատ ընդունակ երիտասարդներ կան: Սակայն նրանցից պետք է պահանջել, սովորեցնել աշխատել, հաղթահարել դժվարություններ և լինել կարգապահ: Եթե մենք ինքներս պատրաստված ու օրինակելի չենք, չենք կարող նույնը պահանջել ուսանողից: Ուսուցիչը պետք է անաչառ վերաբերվի բոլորին, նկատի յուրաքանչյուրին և հատկապես օգնի թույլ սովորողին առաջադիմել: Նա պետք է լինի օրինակելի իր գիտելիքներով, վարքով և մարդկային որակներով, որպեսզի աշակերտը երազի նմանվել նրան: Ես ունեցել եմ այդպիսի ուսուցիչներ:

- Որքանո՞վ է կարևոր համալսարան–դպրոց կապը:

- Այդ կապը շատ կարևոր եմ համարում: Լավագույն դասախոսները պետք է այցելեն դպրոցներ, հանդիպեն աշակերտներին և իրենց գիտելիքով հետաքրքրություն առաջացնեն: Երբ դպրոցում դասախոսություն կարդացի էպոսի և այլ ժողովուրդների էպոսների մասին, աշակերտներից մի քանիսը ոգևորվեցին և հետագայում ընդունվեցին մեր համալսարան: Բուհը պետք է գրավի ոչ միայն իր հնարավորությունների մասին տեղեկություններով, այլև դասախոսների անձնական օրինակով:

- Ի՞նչ տեղ ունի գիրքը տեխնոլոգիաների դարաշրջանում:

- Տեխնոլոգիաները շատ օգտակար են, բայց չեն կարող փոխարինել այն ամենին, ինչ տալիս է գիրքը: Գիտելիքը պահանջում է կենտրոնացում և խորությամբ ուսումնասիրություն: Արագացված ուսուցումը կարող է օգտակար լինել, սակայն հիմնավոր գիտելիքը ձեռք է բերվում հետևողական աշխատանքով և ընթերցանությամբ: Մեծ գիտնականների օրինակը ցույց է տալիս, թե որքան կարևոր են լայն գիտելիքը, լեզուների իմացությունն ու մշտական ինքնակրթությունը:

- Գաղտնիք չէ, որ դասավանդման մեթոդիկաներով են մեծապես պայմանավորված այս կամ այն առարկայի ուսուցման որակն ու մակարդակը: Ինչ խնդիրներ եք նկատում դասավանդման մեթոդների հետ կապված:

-Դասավանդման մեթոդները շատ կարևոր է, բայց դրա հիմքում պետք է լինի առարկայի խոր և բացառիկ իմացությունը: Ոչ մի մեթոդ չի կարող օգնել, եթե դասախոսն ինքը հիմնովին չգիտի այն առարկան, որը դասավանդում է:

- Կա՞ն արդյոք առանձնահատուկ դժվարություններ կին գիտնականի ճանապարհին:

- Ես երբեք չեմ զգացել, որ կին լինելը խանգարել է իմ մասնագիտական ճանապարհին: Ինձ համար կարևոր են եղել գիտելիքը, աշխատասիրությունն ու նվիրվածությունը: Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում. ունեմ սիրելի ընտանիք և ուրախանում եմ հարազատներիս հաջողություններով: Կարծում եմ՝ մարդը պետք է կարողանա գնահատել ունեցածը և բավարարվել քչով:

- Ի՞նչ կցանկանայիք փոխանցել մանկավարժական բուհի աշխատակիցներին և ուսանողներին:

- Կուզենայի, որ բոլորը հպարտ լինեն Մանկավարժականում աշխատելով և սովորելով: Եթե ստանձնել ես մանկավարժի գործը, պետք է այն կատարես սիրով ու նվիրումով:

Մաղթում եմ մեր երկրին խաղաղություն, իսկ կրթությանն ու գիտությանը՝ մեծ ուշադրություն: Տեխնոլոգիաները կարող են շատ օգնել, բայց չեն փոխարինի ուսուցչի և աշակերտի, դասախոսի և ուսանողի անմիջական շփմանը: Ոչինչ չի կարող փոխարինել կայուն գիտելիքին, գրքին և մարդասիրությանը:

Կարևոր է նաև ուրախանալ միմյանց հաջողություններով:

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի

Լեզվաբանության նվիրյալի անկյունը հայրենի եզերքում

Լալիկ Խաչատրյանի մեծությունը նրա թողած ժառանգության մեջ է, որով նա ձուլվում է պատմությանը. Գեղարքունիքի մարզի Գավառի երկրագիտական թանգարանում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի ծննդյան 75-ամյակի առթիվ կազմակերպված հուշ-ցերեկույթը նրա հիշատակի հանդեպ հարգանքի ու երախտիքի տուրք էր, որն իր շուրջն էր համախմբել գիտնականի ծննդավայրի մարդկանց, ղեկավար այրերին, հարազատներին, Մանկավարժական համալսարանի գործընկերներին, ճանաչված գիտնականների ու գրողների:

Հայրենի եզերքի երկրագիտական թանգարանում՝ հազարամյակների պատմության կողքին, հավերժորեն հանգրվանեց գիտնականին նվիրված անկյունը՝ մի քանի տասնյակի հասնող մենագրություններ, բառարաններ, գիտամեթոդական ձեռնարկներ, գիտության, կրթության ու հայապահպանության գործում ներդրած ավանդի համար ստացած բազմաթիվ պարգևներ ու մրցանակներ՝ «Ֆրիտյոֆ Նանսեն» հուշամեդալ, ՀՊՄՀ «Խաչատուր Աբովյան» մեդալ, ԿԳ նախարարության ոսկե մեդալ, «Մեսրոպ Մաշտոց» մեդալ, «Մայրենիի դեսպան» մեդալ, Թեքեյան մշակութային միության մրցանակ, «Մովսես Խորենացի» մեդալ, այլ մրցանակներ, արխիվային նյութեր:

Ներկաները հուզմունքով դիտեցին «Քյավառ» հեռուստաընկերության պատրաստած ֆիլմը, որտեղ հանգամանորեն ներկայացվեց Լալիկ Խաչատրյան անհատի կյանքի պատմությունը՝ մանկությունից մինչև ուսանողական տարիներ ու գիտական գործունեություն՝ խնամքով անդրադառնալով գիտնական մանկավարժի, անվանի լեզվաբանի ու հայագետի կենսապատումի յուրաքանչյուր էջին:

1968 թվականին Լալիկ Խաչատրյանն ավարտել է Կամո քաղաքի №2 միջնակարգ դպրոցը, իսկ 1973-ին գերազանցությամբ ավարտել Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետը՝ աշխատանքային մկրտությունն ստանալով Նորատուսի դպրոցում՝ որպես ուսուցիչ:



1980 թվականին թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել, իսկ 1982 թվականից իր կենսագրության էջերը մեկընդմիշտ կապել Մանկավարժական համալսարանի հետ՝ դասախոսից մինչև ամբիոնի վարիչ, ապա Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածուից մինչև բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

«Լեզվաբանության ոլորտի կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Մնացականի Խաչատրյանը, այսօր կդառնար 75 տարեկան: Դժվար է նրա մասին անցյալով խոսել, առավել ևս՝ ամփոփ ներկայացնել այն գիտական ժառանգությունը, որ նա թողել է եկող սերունդներին:

Նրա ղեկավարությամբ գիտական ատենախոսություններ են պաշտպանել 20 հայցորդ և ասպիրանտ, Սփյուռքի հայ համայնքներում պարբերաբար հանդես է եկել դասախոսություններով՝ ի նպաստ հայապահպանության վեհ գործի, միաժամանակ միջազգային և հանրապետական գիտաժողովներում մշտապես բարձր պահել հարազատ բուհի հեղինակությունը՝ գիտական արժեքավոր զեկուցումներով հարստացնելով հայրենի լեզվաբանության ոլորտի գանձարանը:

Անուրանալի է նրա վաստակը լեզվաբանության ոլորտի ուսումնամեթոդական ձեռնարկների, մենագրությունների, բառարանագրության, հանրակրթության և բուհական դասագրքերի ստեղծման գործում. յուրաքանչյուր աշխատանքի մեջ նա ուներ իր անհատական մասնագիտական ձեռագրաբանությունը՝ գիտնականի, մանկավարժի, հայագետի հիմնավորումներով ու մասնագետի իր պատկերացումներով:

Նա բացառիկ լեզվաբան էր, աշխարհի ամենադժվար բանը բառարանագրությունն է, որին նա հասավ իր համառ աշխատանքով:

Նա եկավ հայրենի Հացառատից, և նրա ստեղծած



յուրաքանչյուր գիրքը հաց է ու հիշողություն, նրա ստեղծած ամեն գիրքը ընծայաքար է՝ մեր պատմությունն ու հիշողությունը կապող թել, ու եթե մինչև հիմա Գավառը նրա հպարտությունն էր, այսուհետև նա է Գավառի հպարտությունը:

Հատկանշական էր Գավառի №2 միջնակարգ դպրոցի տնօրեն Ալիտա Գասպարյանի ելույթը, որում ընդգծվեց. «Հպարտ ենք, որ նրա ճանապարհը սկսվել է մեր դպրոցից, հպարտ ենք, որ մեր դպրոցի աշակերտը դարձել է կրթության նվիրյալ, և պատասխանատու ենք նրա արխիվային նյութերը ծննդավայրի թանգարանում պահպանելով՝ սերունդներին հաղորդակից դարձնել»:

«Լալիկ Խաչատրյանի մեծությունը նրա թողած ժառանգության մեջ է, որով նա ձուլվում է պատմությանը»,-իրավացիորեն նկատեց Գավառի պետական համալսարանի նախկին դեկան, այժմ հասարակագիտության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Համլետ Ղաջոյանը՝ ընդգծելով՝ մարդ, որի ներկայությունն այնքան ցանկալի էր, բացակայությունը՝ այնքան ցավոտ:

Լալիկ Խաչատրյանի գործունեությունն արժևորեց թանգարանի ավագ գիտաշխատող Մարինե Սեֆիլյանը՝ վստահեցնելով, որ գիտնականի թողած ժառանգությունը կշարունակի ծառայել լեզվին ու կրթությանը:

«Այսօր մենք միասին բացեցինք մի լուսավոր պատմության էջ, որը կոչված է հավերժ հիշելու, ճանաչելու և արժևորելոի Լալիկ Խաչատրյանի անունն ու վաստակը»,-ասաց Գավառի երկրագիտական թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանը՝ երախտապարտության այն զգացումով, որ թանգարանին է վստահվել իրենց հայրենակցի ողջ անձնական արխիվը:

Իր երախտագիտության խոսքը ներկաներին հղեց գիտնականի կինը՝ Մարգուշ Միրումյանը, իսկ հուշցերեկույթի ողջ ընթացքը համեմվեց Գրիգոր Պալագյոզյանի և «Ակունք» պետական ազգագրական համույթի մենակատար Հերիքնազ Պոլոյանի կատարումներով՝ ընտրված գիտնականի սիրած երգացանկից:

Հնչեց Մարգուշ Միրումյանի բառերով գրված «Վերջալույսի արև» երգը, որը կատարեց երաժշտության հեղինակ, ՀՊՄՀ շրջանավարտ Հերիքնազ Պոլոյանը:

«Բայց դու միշտ կաս ու կմնաս, վերջալույսի իմ բորբ արև...». հուշի ու հուզմունքի թախծոտ ելևէջներով ավարտվեց ՀՊՄՀ պրոֆեսոր, լեզվաբանության նվիրյալ Լալիկ Խաչատրյանի ծննդյան 75-ամյակին նվիրված հանդիպումը Գավառի երկրագիտական թանգարանում՝ յուրովի ապրեցնելով գիտնականի վաստակն ու պահ տալով սերունդներին:

Սիլվա Ասրյան

Միջազգային գիտաժողով. «Պատմության ուսուցման արդի հիմնախնդիրները»



Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի, Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրների հետազոտության գիտական կենտրոնի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 13-ին անցկացվեց «Պատմության ուսուցման արդի խնդիրներ» միջազգային 4-րդ գիտաժողովը:

Նիստը վարում էր ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու, Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրների հետազոտության գիտական կենտրոնի տնօրեն Հարություն Պապոյանը:

«Գիտաժողովի նպատակն է անդրադառնալ Հայաստանում պատմության դասավանդման մեթոդիկայի զարգացմանը, մեր հանրակրթական դպրոցներում այդ ուղղությամբ հետագա քայլերին՝ դրանք կապելով Սփյուռքի հայկական դպրոցների հետ: Մենք պետք է կարողանանք հասկանալ՝ ինչպիսին պետք է լինի հայագիտության զարգացման տեսլականը հայկական իրականության մեջ, որովհետև այսօր մենք կանգնած ենք որոշակի մարտահրավերների առաջ և պետք է լուծումներ գտնենք»,-ասաց Հ. Պապոյանը:

Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի գիտության գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Նա շնորհավորեց արդեն ավանդական դարձած միջազգային գիտաժողովի մասնակիցներին՝ ասելով, որ պատմության ուսուցումը առանձնահատուկ կարևորություն ու պատասխանատվություն է ձեռք բերում արագ փոփոխվող աշխարհի, մարտահրավերների ու արժեքային վերափոխումների ժամանակաշրջանում: Նա հատկապես կարևորեց երիտասարդ սերնդի ուսուցումն ու աջակցությունը՝ համադրելու պատմությունն ու նրա ընթացքը, գիտակցելու պատմության ուսուցման պատասխանատվությունը:

Պրոռեկտորը հույս հայտնեց, որ ներկա գիտաժողովը կնպաստի նորարարական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմանը պատմության ուսուցման դասավանդման ընթացքում՝ միաժամանակ կարևորելով միջազգային գործընկերների դիտարկումները վերոհիշյալ հարցերում:

«Մանկավարժական համալսարանն այն հարթակն է, որ համախմբում է գիտնականներին և հնարավորություն է տալիս՝ կիսելու իրենց գիտական հետազոտություններն ու փորձառությունը»,-նկատեց Մարիամ Իսպիրյանը:

Դեկան, պատմական գիտությունների թեկնածու Էդգար Հովհաննիսյանը ևս շնորհավորեց ներկաներին՝ ընդգծելով, որ գիտաժողովի առանձնահատկությունը ընդհանուր թեմատիկ ուղղվածությունն է՝ նվիրված արհեստական բանականության խնդիրներին.«Այսօր արհեստական բանականությունը մտել է մեր կյանք՝ բերելով մեծ հնարավորություններ ու նաև մարտահրավերներ: Որքանով նա կդառնա մեր օգնականը՝ այնքանով մենք կհաջողենք, որքանով նա կդառնա մեր փոխարեն մտածող ու գործ անող՝ այնքանով կձախողվենք: Ճիշտ բանաձևը երկուսի համադրումն է նաև պատմության դասավանդման բնագավառում»:

Դեկանը որպես կենտրոնի արդյունքներ՝ ներկայացրեց երկու ուսումնական ձեռնարկ՝ «Նախագծային ուսուցման տեխնոլոգիա» ձեռնարկը, որի համահեղինակներն են պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հակոբ Թադևոսյանը և ՀՊՄՀ մագիստրատուրայի ուսանող Անժելիկա Պետրոսյանը: Մյուս ձեռնարկը՝ «Արտադասարանական միջոցառումների պրակտիկում» վերնագրով, հեղինակել է ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ Արմինե Եփրիկյանը:

Ձեռնարկները հիմնված են պրակտիկ փորձի վրա, ունեն կիրառական նշանակություն և կոչված են աջակցելու հանրակրթական դպրոցների «Պատմություն» դասավանդողներին՝ վստահեցրեց դեկանը՝ հավելելով, որ գրքերը գործնական դաշտում առկա պրակտիկ խնդիրների լուծման բալասան են:

«Թվային դարաշրջանի մարտահրավերը. ինչպես է արհեստական բանականությունը փոխում պատմության դասավանդման մեթոդիկան» խորագրով զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Խաչատուր Ստեփանյանը:

Պրոֆեսը ներկայացրեց իր մտահոգությունները՝ ինչպես է արհեստական բանականությունը փոխում պատմության դասավանդման մեթոդիկան: Նրա կարծիքով հումանիտար գիտությունները, մասնավորապես պատմության ուսուցումը, կանգնած են լրջագույն մեթոդաբանական մարտահրավերի առաջ՝ «կամ դիմադրել տեխնոլոգիական հեղափոխությանը՝ վերածվելով անցյալի կոնսերվածված մնացուկի, կամ վերանայել սեփական դիդակտիկական գործիքակազմը և արհեստական բանականությունը ծառայեցնել որպես զարգացման նոր կատալիզատոր»:

Բանախոսը ներկայացրեց, որ ժամանակները փոխվել են. եթե անցյալում գիտելիքն ու դասագիրքը անցյալի մասին գիտելիքի միակ ու անփոխարինելի շտեմարաններն էին, ապա արհեստական բանականության հայտնվելը վերջակետ է դնում այս պատմական մենաշնորհին:

«Արհեստական բանականության գործիքների ներդրումը ծնում է դիդակտիկական նոր, յուրօրինակ հնարքներ, որոնք անմիջականորեն առնչվում են աղբյուրագիտությանը,-ասաց զեկուցողը և հավելեց. «Գեներատիվ ԱԲ-ն իր այս յուրահատկություններով լրջագույն մեթոդաբանական և մանկավարժական մարտահրավերներ է նետում պատմաբանի «արհեստին», սակայն միևնույն ժամանակ ստեղծում է նոր հնարավորություններ»:

Զեկուցողն իրավացիորեն նկատում է, որ արհեստական բանականությունը անխուսափելիորեն կրում է իրեն սնուցած տվյալների բազայի կողմնակալությունը, գաղափարական ազդեցությունները և հաճախ հակված է «հալյուցինացիաների»՝ պատմական փաստերի, ամսաթվերի կամ մեջբերումների հորինմանն ու կեղծմանը:

«Տեխնոլոգիական այս հեղափոխությունը չի վերացնում և չի նվազեցնում պատմության ուսուցչի դերը, այլ հիմնովին վերամշակում ու վերաիմաստավորում է այն՝ ազատելով նրան զուտ տեղեկատվություն հաղորդողի մեխանիկական բեռից և էլ ավելի ուժեղացնելով նրա հումանիստական ու արժեբանական առաքելությունը»,-ասաց պրոֆեսորը և ճիշտ դիտարկում արեց. «Որքան էլ հզորանան թվային ալգորիթմները, դրանք բացարձակապես զուրկ են պատմական հիշողությունից, էմպատիայից, հուզական բանականությունից, ինչպես նաև ազգային ու համամարդկային արժեքների խորքային գիտակցումից»:

Եվ՝ «Թվային դարաշրջանի մարտահրավերն ընդունել՝ չի նշանակում պատմությունը հանձնել մեքենաներին: Դա նշանակում է մեթոդիկան դարձնել այնքան ճկուն ու խորը, որ սովորողը ոչ թե պարզապես սպառի անցյալի մասին տեղեկատվությունը, ամբողջությամբ հանձնվի դրան, այլ սովորի իմաստավորել այն»:

Կապանի №3 միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի, ՀՊՄՀ շրջանավարտ Մերի Մարտիրոսյանը ներկայացրեց «Աշխարհացույցը՝ որպես աշակերտակենտրոն ուսուցման հարթակ» զեկուցումը:

Այնուհետև գիտաժողովն ընթացավ երկու բաժանմունքներում՝ անդրադառնալով պատմության դասավանդման արդի խնդիրներին, այդ թվում՝ թվային կրթության և արհեստական բանականության տարբեր դրսևորումներին ու մարտահրավերներին պատմության ուսուցման ու դասավանդման գործընթացում՝ ընդհուպ մինչև պատմության ուսուցչի մասնագիտական դիմագծի փոփոխությանը ԱԲ դարաշրջանում, մեդիագրագիտության և քննադատական մտածողության մարտահրավերներ:

Գիտաժողովին մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի Հանրապետության մասնագետներ, ուսուցիչներ և ուսանողներ:

Սիլվա Ասրյան



Մանկավարժականում էր արգենտինահայ դուդուկահարը

Հայազգի դուդուկահար Գագիկ Գասպարյանը շուրջ 30 տարի ապրում է Արգենտինայում՝ հայ ազգային մշակույթի միջոցով աշխարհին ներկայացնելով հազարամյակների մեր քաղաքակրթությունը:

Նոյեմբերի 10-ին դուդուկահարը Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի հյուրն էր. Կուլտուրայի ֆակուլտետի ազգային նվագարանների պետական նվագախմբի գեղարվեստական ղեկավար, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Նորայր Դավթյանի և ուսանողների հետ հանդիպմանը նա լսեց ուսանողների կատարումները և խոսեց հայ ազգային մշակույթը աշխարհի ժողովուրդներին ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Գագիկ Գասպարյանը նվագում է հայ և արտասահմանյան երգահանների ժողովրդական ու դասական, հայ հոգևոր երաժշտություն՝ արտերկրում համերգային ծրագրերով հանդես գալիս քրիստոնեական եկեղեցիներում: Նա աշխարհի տարբեր երկրներում ներկայացնում է հայ երաժշտական մշակույթը հանուն խաղաղության, երաժշտություն առանց սահմանների: Դուդուկահարի նպատակն է դուրս գալ մեկուսացումից և աշխարհին ներկայացնել՝ ով է հայը, հազարամյակների ինչ քաղաքակրթության կրող է, ինչ ժողովրդական նվագարաններ ունի:

Հայաստանում նա նպատակ ունի հայ ուսանողներին ծանոթացնել դուդուկի դասավանդման իր նոր մեթոդներին, որպեսզի կիրառվի այն մեզ մոտ, ժամանակի նոր շունչ հաղորդելով հայ ազգային գործիքի կատարմանը:

Հավելենք, որ օգոստոսին ՀՊՄՀ դասախոս, քանոնահար, ՀՀ ժողովրդական արտիստ Հասմիկ Էյլոյանը Գագիկ Գասպարյանի հետ Արգենտինայում, Ուրուգվայում և Բրազիլիայում հանդես է եկել համերգային անհատական ծրագրերով՝ հայ երաժշտությունը ներկայացնելով տեղի արվեստասեր հանրությանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ

Ուսուցչի և Թարգմանչաց տոներին ընդառաջ մեկնարկվեց XXXIX (2026—2027 թթ.) ուսումնական տարին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում:

Դպրոցի հին ու նոր սաները ընթացիկ դասերին զուգահեռ, ինչպես միշտ, մասնակցում են ճանաչողական բաց դասերին, որոնց նպատակն է ներկայացնել հայ ժողովրդի ծագումը, պատմության դրվագները և ծանոթացնել հայ մշակութային գանձարանի մեծերին:

Թեմատիկ դասերի շարքը մեկնարկեց Թարգմանչաց տոնով և Մեսրոպ Մաշտոցի կերտած այբուբենի գաղտնիքների բացահայտումով: Ներկայացվեց նաև նրա աշակերտների՝ Կորյունի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու և այլոց թողած ժառանգության մասին, և, իհարկե, ակնարկ եղավ քերթողահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությանը:

Գաղտնիք չէ, որ լեզուն, կրթությունը, առհասարակ, նպաստում է մշակույթի զարգացմանը, տարածմանն ու պահպանմանը: Պարային շարժումները դրանց մասնիկն են: Ուստի հերթական բաց դասը վարեց Երևանից ժամանած Հայաստանի պարի պետական համույթի մենակատար՝ «Հայկական կարապ» Լալա Տոնոյանը: Նա խոսեց հայկական պարի դերի ու նշանակության մասին հայ ժողովրդի կենցաղում և այն մարտահրավերների մասին, որոնք կանգնած են մաքրամաքուր հայկական պարային շարժումները պահպանելու առաջ:

Հավատարիմ մնալով ավանդույթներին՝ այս տարի ևս բաց դասեր են նվիրվել աշնանային «Բերքի տոնին», հայկական մայրաքաղաքներին և Երևանի 2808-ամյակին, հայ ժողովրդի՝ «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Վահագնի ծնունդը» առասպելներին: Այն եզրափակեց «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսին նվիրված բաց դասը, որը հայ ժողովրդի կենցաղի, բարքերի, աշխարհայացքի հանրագիտարանն է՝ առաջին անգամ գրի առնված 1873 թվականին՝ բանասեր Գարեգին Սրվանձտյանի կողմից: Ի դեպ, այս տարի՝ ամառային արձակուրդների շրջանակում, դպրոցի սաները, որոնք հանգստանում էին իրենց պատմական հայրենիքում, դիտել են «Փոքր Մհեր» լիամետրաժ մուլտֆիլմը՝ նման ձևով ամրապնդելով իրենց գիտելիքները էպոսի մասին:



Խոսելով լուսավորչական ժառանգության մասին՝ անպայման նշվում է Լազարյանների տոհմի պատմությունը: Այս տարի ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գուրգեն Արսենյանի աջակցությամբ հնարավոր եղավ շրջել Լազարյանների կալվածքով, տեսնել այն սրահները, ուր ժամանակին այցելել են Մ. Նալբանդյանը, Հ. Այվազովսկին, Վ. Տերյանը, Ա. Խաչատրյանը և Ա. Բաբաջանյանը, ինչպես նաև Ալ. Պուշկինը, Ալ. Գրիբոյեդովը, Իվ. Տուրգենևը, Լև Տոլստոյը, Կ. Ստանիսլավսկին և այլոք: Այս թեմայով դասախոսությունը և էքսկուրսիան վարեց ՌԴ-ում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար Սարգիս Գրիգորյանը: Ի դեպ նշենք, որ ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը գտնվում է իր երկրի անունը կրող փողոցի վրա՝ Հայկական նրբանցք, որը բացառիկ երևույթ է:

Այսպիսով, հայապահպանության աշխատանքը, որի գլխավոր բաղադրիչներն են գիրն ու խոսքը, շարունակվում է: Չէ՞ որ նոր սերունդը հետաքրքրված է իր պապերի երկրով, պատրաստ է ուսումնասիրել պատմության էջերը, որպեսզի ավելի խորությամբ իմանա ինչ ժառանգություն է հայը թողել համաշխարհային պատմամշակութային գանձարանում:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

«ՈՍԿԵ ԱՇՈՒՆ»՝ փոքրիկների հետ





ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը հանդես եկավ հերթական նախաձեռնությամբ. համալսարանում անցկացվեց «Ոսկե աշուն» խորագրով միջոցառում, որին մասնակցեցին ուսանողներն ու ՀՊՄՀ №57 հիմնական դպրոցի 2-րդ դասարանի աշակերտները: Համալսարանական միջավայրում փոքրիկները ներկայացրին ստեղծագործական իրենց հմտությունները՝ աշնանային գույներով լեցուն սեղանների շուրջ:

Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների նպատակն էր մշակութային կապ ստեղծել կրտսեր բարեկամների հետ՝ միաժամանակ բացահայտելով նրանց կարողությունները թեմատիկ միջոցառման ընթացքում, որտեղ փոքրիկները ներկայացրին աշնանային գունագեղ մրգերով կոմպոզիցիաներ:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ